

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՕՐ", Ի

ՆԱՍԱԿ ԿԱՍ ՈՐ ԵՒ Է ՅՂԵՍԱԿՅՈՒԹԻՒՆ

ՊԵՏԵ Է ՈՒՂՂԱԿ ԱՊ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Կարգի

ԳԱՀԻՐԷ

Նամակատուի Թիւ. 117

DIRECTION DU JOURNAL

NOR-OR

CAIRE, B. P. N° 117

Ձեռագիրներն եւս չեն գարձուիր

ՆՈՐՕՐ

Լ. Ր. Ա. Ք. Ի. Ր.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՊՇԱՆՈՒԹԻՒՆ ԼՍՍՐԱՆ-ԸՂԹԵՐՅԱՍՏԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Գրքերի համար	Տարեկան	50
"	Վեցամսեայ	30
Երջակայից	Տարեկան	60
"	Վեցամսեայ	35

ԱՐՏԱՍԱՇՄԱՆԻ ՇԱՄԱՐ

Տարեկան	Յրանց	18
Վեցամսեայ	"	10

ՌՈՒՍՈՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՇԱՄԱՐ

Տարեկան	Բուլի	7
Վեցամսեայ	"	4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆԽԻԿ Է

ՍԵՐ ԲՈՂՔԱՍՏԻ ԾԱՌԸ

ԹԵՐԻՔԻՆ ՎԱՐՇՈՒ ՔԻՏԱՆԻ ՎՐԱՅ Է:

ՈՃԻՐՆԵՐ ՈՒ ՎՃԻՐՆԵՐ

Եթէ բազմատեղի ազգերու սրբազան մատենաները, Աստուածաշունչն ու Վեհան, Թարգմանի Գրքանքը, բարձր ալ միաբերան կը վկային թէ՛ առաջին մարդուն առաջին որդին եղած է Ա. ոճ-բազործը : Կայէն սպաննեց Աբել : ահա՛ առաջին դասը, զոր կ'աւանդեն Ս. Հայրերու գրաւորոցներուն մէջ, կարծես թէ սղուն ըզեղին մէջ առաջին անգամ այդ ոճի գաղափարին թոյնը հոսեցնելու մասնաւոր դիտումով մը : Ընդունինք թէ՛ ոճիրը՝ մարդկութեան հասակակից ու անոր խառնուածքէն անբաժան էութիւն մ'ունեցած է : Դարերու հորովումով՝ կեանքի նորանոր պայմաններ ստեղծած և այդ պայմաններուն տակ, ապրած ևն միխնաւոր սերունդներ, իրարու արիւնով կշտանալու հակամէտ : Դասակարգերու տարբերութիւնը, բարբերու և կիրքերու բռնութիւնը, փառքի մոլութիւնն ու շահու սեռնը, կեանքի ծովուն կոհակներուն մէջ թաւալող ու լողացող ճիւղներ, յաջորդաբար ու թերեւս միեւնոյն ժամանակ, դառնացողին մարդկութեան ճակատագիրը : Մարդը, լաւագոյն բազդի մը սահմանուած, սակայն, աւա՛ղ, իր իսկ բնազդովն ու խելքը բուռած վտանգաւոր

ուղեցոյցովն առաջնորդուած այս հանելուկ ու առեղծուած էակը, էականերուն դատապարտելով, անիծելով դարձաւ : Գանի՛ աճեցաւ մարդկային ցեղը, այնքան բազմապատկուեցաւ ոճիրներու թիւը : Ու երբ հարկ ըլլայ որակել այդ ոճիրները, կշռել ու չափել անոնց քանակը, սրտերը սոսկումով սառեցնող համեմատութեան մը հանդէպ կը ցնորի միտքը : Եթէ թուենք պատմական մեծ ոճիրներն ու այդ ոճիրներուն հեղինակ հրէշները, սկսեալ եղբայրասպան երկրագործէն մինչև հպատակասպան թագապատկները, պիտի տեսնենք որ ոճիրը՝ ոճիր է միշտ, ամեն տեղ ու ամեն ժամանակ : չունչ մը, հոգի մը պակսեցնել երկրագնախա երեսէն : ահա՛ սահմանը : Սակայն, ամեն դար իրեն յատուկ ըմբռնումով կտակած է ոճիրներու շարք մը, իրարմէ աւելի ահուկի ու նոզկալի : Երբ կը թղթատենք Հռովմէական երկրաստան կայսրութեան պատմութիւնը, մահասարուռ ցնցումով մը կանգ կ'առնենք կը մնանք կարակալաններու, կլոտիաններու և ներոններու զազիր ուրուականներուն առջև : հոն, մեր քարացած աչքերուն առջև կը պարզուի հրկիզեալ Հռովմի, արիւնի ու միտքի տեսարանը : եղբայր, քոյր, հայր, մայր,

սրգի, աղջիկ, կոյս, ծեր, կին, ամբողջ ընտանիք մը, ցեղ մը, մարդկութիւնը՝ գաղաններու առջև նետուած, խոշտանգուած, խեղդուած, թունաւորուած, գլխատուած, ցից նանուած : Հռովմէն կ'անցնինք Ասիա, նոյն հրէշային նախնիները, արքունական կամարներու ներքեւ, արքայական խնջոյքներուն մէջ ու հրապարակներուն վրայ : Ոճիրներու լեռնաշղթայ մը, որուն մէջ պրկուած, տառապած, յախտեալ փճացած է կեանքը : Այդ գաղանութիւններն ու վայրագութիւններն անցա՛ն, ատոնց վրայ դարերու փոշին եկաւ նստաւ, թող ըսեն, բայց ի՞նչպէս կրնանք այդպէս կարծել, երբ այսօր, լուսաւորութեան ու քաղաքակրթութեան այդ գարավերջին, գիտութեան ու բարոյականութեան ճոխ ու շուայլ խոտաւններէն շլացած, կը նշմարենք մարդկութիւնը՝ որ կ'ընթանայ իր ճամբան ու կը հանդիպի, ամեն մէկ քայլափոխին, խոչընդոտի մը զոր հոն բերած դրած է գաւաճան մը, ոճրագործ մը, ըլլայ անհատ մը, ըլլայ ընկերութիւն մը : Հիսուսաբար, իրաւունք ունինք պնդելու թէ՛ մարդը միշտ մարդն է : անունը, արտաքինը միայն փոխուած, իսկ ինքը, ներքինը՝ նոյն մոլին, նոյն անուղղան, նոյն վնասակար գաղանն է : Եւ ինչո՞ւ պահենք, ինչո՞ւ չը հրապարակենք բացարձակ իրականութիւնները : չէ՞ որ անոնք կան ու

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

Յովհաննէս Այվազովսկի, տիեզերահոգակ նկարիչը Գարրիէ Արքեպիսկոպոս Այվազեանի հարազատ եղբայրը, ծնած է 1817 Յուլիսի 17ին Ատոնց նախահայրերը Որիմէն առեւտով գաղթած Լէհաստան, ուսկից Որիմ վերադառնալով փոխած են իրենց ցեղի մականունն Եան մասնիկը՝ սկի մասնիկին, և այնուհետեւ Այվազովսկի կոչուած է իրենց տունը : Մնորավայրն է Թէնորսիա, գեղեցիկ ծովեզերեայ քաղաքը, ուր անցող Այվազովսկի իր մանկութեան առաջին տարիները, ամեն օր երթալով ծովափը, դիտելով ալիքներուն ելեւէջը : Սա, մանուկ հասակէն, իր վրայ ցոյց տուաւ մասնաւոր հակում ու առակութիւն : դէպ 'ի նկարչութիւն, իր ճարտար մասններուն հաւասար աչքեր ունէր նկարող Որիմու կանաչ գաշտերը, անտառախիտ լեռներն ու գեղածիճալ հովիտները, բլուրները ծիծաղկոտ ու ծովը գեղածուփ : կիսաւեր կամ կանգուն տաճարները, պտուկած սրբատաշ խրճիթերով, հնաւանդ պատկերներն ու քանդակները : բնավայրին դիրքը, չը՛սպատող ծիրանի հորիզոնն ու ընտելիւնը բոլոր, միամալով այս բնութեան զաւակի փափուկ, թափանցիկ, զգայուն ու երազուն խառնուածքին, կազմեցին պատանի նկարիչը, որ Այվազովսկին պիտի ըլլար յետոյ : Մասուկն Յովհաննէս, շատ օրեր, իրիկուան դէմ կ'երթար նստելու ծովափը, դիտելու տեսարանները,

մոլոր բերքը թաղելու հեռաւոր մենութիւններու խորերը : անզուսպ աննշով մը կը սիրէր ժամերով յառած մնալ : աչքերովը փարիլ հորիզոնին, զաւարուն ոլորուն ալիքներուն վրայ դիտելու ոսկի ծիրանի վերջալոյսներուն փողփողումներն ու նուաղումները : Արծիւ էք, նեղ կուղար իրեն բնակարանը, կուղէր դուրս նետուել, միշտ բացը, խոյանալ կուղէր երկնքի կապուտակին խորերը, մերթ խորասոյզ նստուել ծովի յատակը, յաղուրդ մը աւալու համար իր գեղարուեստի ծարաւին : Յաճախ կ'երթար կը կորուէր ծովափնայ ամալութեանց խորը, սեւեռուն բերքը լուսնին, որ անամպ կապուտակի մը խորէն կը ժպտէր անոր, իր սպազայ պաշտողին ու նկարողին : Ո՞վ կրնար զգալ վսեմ պատանիին ներքին յոգեբն ու ինքնամոլութիւնը, ամեն անգամ որ հորիզոնը կը նըշմարէր թիժ մը, ստուեր մը, նաւ մը : այնքան կը սիրէր ծովային տեսարանները : Տաղանդաւոր սղուն բազդը բացուեւր էր : Օր մը հայտնէր ռուս ազնուական մը Քէֆէյի մէջ պտոյտի կ'իւնէ ու ծովեզերքէն անցած ատեն կը տեսնէ նկարիչ ծնած մեր պատանեակը, որ, ծովափը քարի մը վրայ նստած, կը նկարէր ծովուն ալիքոճութիւնը, կը մտնեայ, կը նայի նկարին, կը հիանայ : կը հարցնէ ազգասո՞մը կ'իմանայ : և անմիջապէս կը յղանայ գաղափար մը, վսեմ ու զարմուտան : կը խորհի բարեբար ըլլալ անոր, վստահ ըլլալով որ այդ պատանին մեծ ապագայ կը խոստանայ իր բնատուր հանճարով : նա պիտի կազմէ, կը խորհէր ինքնիրեն, փառք ո՛չ միայն իր տարաբազդ տոնին, այլ և պիտի բարձրացնէ պատիւը Ռուսիայ, որուն հպատակն է : Ուստի, չ'ուշանար ձեռք գնելու վրան, կը պաշտպանէ : 1833ին կայսերական հաճութեամբ Բեթրսպուրկի Գեղարուեստից ձեմարանին,

աշակերտ ընդունիլ կուտայ պատանին, որ ան ատեն 16 տարեկան էր : Ձեմարանին մէջ Այվազովսկին շուտով գարձաւ լաւագոյն աշակերտներէն մէկը, ու իր անկախ նկարչագրովն ու ինքնուրոյն տաղանքովը գրաւեց բոլոր ուսուցիչներուն համակրանքը : Ամէն ալ անոր վրայ կը նայէին իբրեւ ապագայ շողողուն աստղի մը վրայ, որ սահմանուած ըլլար փեղարուստից երկնքին մէջ նոր ու պայծառ համաժողովութիւն մ'աւելցնելու : աշակերտ, ուսուցիչներուն ունչ ու սիրաբ կը զօշոտէր, թէեւ երբեմն ալ, հայու յատուկ նկարագրովն ու իր անկախ քայլերովը՝ շուրջը կ'ստեղծէր նախանձի մտեցող կրթիւր, նոյն իսկ ուսուցիչներուն մէջէն : Աշակերտական շրջանին վրայ հազիւ երկու տարի անցած, Բ. կարգի արձաթի պատուանշան առաւ, յաջորդ տարին, 1836 ին, Բ. կարգի ոսկի պատուանշան : իսկ 1837 ին Ա. կարգի մեծ ոսկի շքանշանէն զատ կայսերական արտոնութիւն ստացաւ երկուտե Խրիմ, ծովային տեսարանից նկարելու համար : Երկու տարի վերջ, 1839ին, Առաջնակարգ նկարիչի տիտղոսն առաւ : Հետեւեալ պատմութիւնը, որ մեր վերեւ ըսածները կը հաստատէ, Պ. Գրաւչէնքօ կը գրէ « Ռուսիա » լրագրին մէջ վկայելով թէ ինք լսած է զայն նոյնիսկ Այվազովսկիին բերնէն : Նիկոլա Բաւլովիչ կայսրը, որ շատ կը շահազորուէր նորահաս տաղանդներէ, կը սիրէր յաճախ տեսնելու ծովայինները ստանալ Այվազովսկիին մասին : Յորտեսացի ծովանկարիչ Ֆիլիք Դանճէր քիչ մնաց որ նկարչու շուկան տապաքէզք փակէր երիտասարդ նկարչին առջև : Օր մը, Բեթրսպուրկի արքունիքէն շատ մը յանձնարարութիւններ արտաքաւ նկարներու, զորոշուտով գրելու,

կան. ի՞նչ, կարելի՞ է չընդունել թէ՛ հին գա-
րեբու ոճերնքը գերազանցող նոր ոճերնքը կան
հիմայ :

Եթէ ոճեր է գողութիւնը գրամի կամ ըս-
տացուածքի. ի՞նչ անուշով մկրտենք ուրեմն
այն անպատիւ բանաստեղծութիւնները, որ այսօր
պարբերական թերթերուն սինակները կը սե-
ցնեն. եթէ ոճեր է մարդ սպանելը, ի՞նչ է գաղա-
փա՛ր մը, Նանթուուս ձեռնարկ մը, Նաստատու-
թիւն մը խափանելու, քանդելու յիմար յա-
ւակնոտութիւնը. ի՞նչ է ուրեմն ժողովուրդի մը,
ազգի մը, տէրութեան մը շահերն՝ իր սեպհա-
կան ձգտումներուն ու դիտումներուն ծառա-
յեցնելու հրէշային գաղափարը. ի՞նչ է ընտա-
նեկան սրբութիւնը ողջեցելու բնութիւնն ունցող
ամբարիշտ յարաբերութիւնը. ի՞նչ է ամբարիշտ,
խաւթանին՝ կործանելու ու կորստաբեր ուղղութիւն
մը սալու տխրամբութիւնը. կան ոճերնքը, որ
անհաստակն են, կա՛ն ալ որ հանրային են,
կա՛ն որ գրասկան են, կա՛ն ալ որ գիտական են
ու բարոյական :

Վերջապէս, մեր մտորակը՝ տեսակ մ'Ար-
շակաւան է, ուր ճակատագրային դժբաղդու-
թիւնը բերած նետած է ոճերգործներու հրոս
մը. ծովուն մէջ, մեծ ու փոքր ձուկերուն, ցա-
մաքին վրայ՝ մեծ ու փոքր երկոտանիներուն
հացի խնդիրը :

Ծով ու ցամաք արեւնով պէտք է ներկուին,
ու յետոյ, եթէ հնչէ կատարածի ժամը, պէ՛տք
է շնչաւորներու արիւնովն ու աստղերու կրա-
կովը մաքրուին այս բոլոր աղտոտութիւնները,
այս բոլոր ախտերն ու պղծութիւնները . . . :

Մարդկութիւնը պիտի շարունակէ իր գործը.
զրկել ու զրկուիլ, ոճեր ու զոհ. իսկ ժամանակը
անողք գատաւորը, պիտի արձակէ իր վճիռ-
ները, իրեն չափ անողք :

Է՛հ ուրեմն, յուսահատի՞նք, եթէ ամեն տեղ
ցցուի մեր առջև դառն իրականութիւնը. յու-
սահատի՞նք, թէ ոչ՝, աւելի ճիշդ թափենք ջրն-
ջիւղ, արմատախիլ բնելու ինչ որ խոչընդոտ է
մեր ուղիղ քայլերուն, ինչ որ կը յանդգնի չե-
ղեցնել մեզ մեր նպատակէն, որ է ծառայել
հանրութեան, պաշտպանելով տկարին դատն ու
անդամալուծելով բիրտ ուժին ստնձըղութիւն-

ները. մերկելով ախտերն ու բուժելով վէրքերը,
խայտառակելով յայտնի գաղտնի ոճերնքն ու
բարձրաձայն արտասանելով վճիռները, այս թող
ըլլայ մեր ամենուս սկզբունքը :

Խ.

ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԵԱՆ ՆՃԱՆՆԵՐ

Յնդեցաւ Ակզն ու ծագեցաւ մէջ Նոր օր,
Հեբի՛՛հ, ո՛՛ Սփիինս, մնչեմ դարեք ինք օրօր :

Այն անիծեալ օրը, երբ Աստուած ու մարդ, մին
ականջը խցած, իսկ միւսը՝ վայրագ աչքն ու խիզճը
կուրացուցած, հալածելու ելան մեզ, անգամ մ'եւս մա-
հացու վէրք մ'առաւ Մայր-Հայաստանը :

Ինչե՛ր չ'զգաց այդ օր քանիցս այրիացեալ Անին...
Աւերակներու վրայ՝ լալագին ու անմխիթա՛ր՝ աղի լեղի
յորդ արցունքներ թափած պահուն իսկ, հազարաւորներ
իր հարազատ զաւկներէն, վերջին լսեմ հրաժեշտ տա-
լով իրենց սրբանուէր ծննդավայրին, հայրենի սունին
եւ տեղին, սարսափահար եւ ուղեմոլոր, անձնատուր
կ'ըլլային ծովին այրիներուն, թողով որ անհղաժողուն
հովերէ տարութիւն իրենց այնքանալ առաջատանաւը :

Ո՛ւր կ'երթային, ո՛ւր չարամիտն Պոսիտոն պիտի
սուշնորդէր դիրենք. պիտի գտնէին ասպնջական հան-
գրուան մը, հանգչեցնելու իրենց խաչեցեալ պոլսր . . .
Թափառակա՛ն հրեաներ, ո՛հ, կ'երթային ու կ'երթային,
հեռուն՝ օտար աստղերու տակ, ցոյց տալու քրիստոնեայ
աշխարհին թէ՛ անդին, Արարատի ստորոտը, քաղաքա-
կրթութեան խանձարուր մը կը քանդուի, նահապետա-
կան պատկառելի ազգ մը, համակրօն ցեղ մը. ազա-
տութեան սիրտն համար Գողգոթայի վրայ կը բարձ-
րանայ :

Ու կուգային ստուարացնելու թիւք տարագրիւն-
բուն, որ նախ ապաստանած, յետոյ քիչ քիչ հաստա-
ուած էին արտասահմանի մէջ. մինչ մենք, հինբոս,
կէս մը խորթացած հայեր, գառնաղէտ հետաքրքրու-
թեամբ մը կը հետեւէինք անոնց շուարած քայլերուն
Լաւտես եղանք ու յոռտես : Մեր ցաւակցական ար-
ցունքները դեռ չը ցամքած՝ առիթներ ունեցանք յուզ-
ուելու եւ կազդուրուելու : Տխրեցանք, երբ դեռ վեր-
ջին տարիներս, «Փարոս»ի մէջ կարգայինք մեր ունեալ
ու զարգացած կարծեցեալ զաղթական հայերուն ծու-
լութեան ու ապիկարութեան մասին գրուածները, ու
զանազանք, տեսնելով արտասահմանի մասուլին մէջ
օտարներէն հայու աննպատ յայտնուած կարծիքներ,
եւ որ պեղալին է, սուրբ դատի մը շուրջն ի գործ դըր-
ուած արարքներ եւ մարտդութիւններ՝ խոնարհելով
պաշտելի յիշատակներուն անոնց որոնք, Հայկայ ճըշ-
մարիտ թոռներ, հերոսաբար ինկած էին պատերազմի
զաշտը . . . :

Ուրխացանք ալ, ամեն անգամ որ յուսատու ար-
ձագանքներ հասան մու : Անհուն հաճողով մը կը հա-
մակուի ճշմարիտ հայրենասէրը, երբ կը տեսնէ անձ-

նուէր ազգայիններ որ այսօր, անխախտ սովորու-
թեամբ մը, կ'աշխատին արտասահմանի մէջ մեր բազմ
փոխելու . գրագէտներ, հրապարակապիւրներ՝ խլացած ու լու-
թապաշտ եւրոպային կը ծանօթացնեն հայուն անուշը,
հայուն խաչելութիւնը, անոր սուրբ իղձերն ու իբր
մարդ սպրկու. իրաւունքը, բանաստեղծներ կ'երգեն,
գիտուններ, արուեստագէտներ, նկարիչներ, իրենց փայ-
լուն տաղանդով կը հռչակեն ի լուր աշխարհի հայուն
զարգացած կամ զարգանալու գերազանցապէս ունակ
միտքը : Ամենէն մխիթարականն այն է թէ՛ Փարիզի
ցուցահանդէսն ունեցաւ հայուն բաժինը :

Այս հակիրճ տեսութիւն է վերջ, չնչք սխալիք թէրեւս
եղբարեացեալով որ այս ամենը ապագայ մեծ յառաջդի-
մութեան մը լուսաշողջող պատկերացումներն են եւ թէ՛
այն անլուր աղէտներ, որ պահ մ'ուժեթափ ըրին գոր-
ծել սխտած ձեռքերը, ապահովապէս նոյնքան բարեքնի
պիտի բերեն մեզ, երբ օր մը, — իցի՛ւ մօտ եղած ըլլաւ
այդ յաւէտ մաղթելի օրը — մեր սուրբ իղձերուն փառա-
պսակին արժանանանք, որուն իսկապէս արժանի ենք :

Մասնաւորելով մեր խօսքը եզրուարականի բոլորս հա-
մար, խոստովանինք որ դեռ նշանակելի յառաջդիմու-
թիւն մ'ըրած չունինք եւ շատ հաւանորէն արտասահ-
մանի միւս գաղթականութեանց հետ, հակառակ մեր
բոլոր առաւելութիւններուն, գուցենք այդ չ'արժեցանք :
Մաղթենք սակայն որ մօտ ապագայի մը մէջ, հաճոյքը
ունենանք վայելելու արդիւնքը այն վառվառն գոր-
ծունէութեան՝ որ կը տեսնուի հոս ալ ատենէ մ'ի վեր :

Որքա՛ն ուրախառիթ է արդարեւ տեսնել՝ որ ըն-
կերութիւններու թիւերը հետզհետէ կը բազմապատ-
կուին, մի գուցէ տաղուտի պատճառով չափ ժողով-
ներ, պաշտօնաբաշխութիւն, հանգանակութիւն. բաժնո-
ւորագործութեան հրաւէրներ. — Աստուած քաակնիս պօլ
ընէ — օրը նոր՝ հրաւէրը նոր : Երկու տղարան, երկու
թերթ, հաղիւ «Փարոս»ը իր վերջին նշոյնները ժողո-
ված՝ հաղիւ փոքրիկ «Փիւնիկ» իր տաքուկ միտքին
մէջ արթնուած, յանկարծական ոտտոտումներ կ'ունեն-
անք . . . «Արշալոյս»ը ծագած է, արթնցի՛ր, ո՛վ
քնասէր եզրուարացալ. ու դեռ անոր կարմիր շողերը չը
ճառագայթած՝ անա «Նոր Օր»ը, բացուած՝ պայծառ
եւ բարեբար արեւի մը նորարածած ցոլքերով :

Այս առաջին անգամն է թէրեւս որ ընթերցասէր
ընկերութեան մը կողմանէ այսպիսի նպատակ մը իր
գործադրութիւնը կ'ունենայ. յանդուրեւ եւ՝ ըստ ոմանց
խնամատակաց՝ անհրաժեշտակցած, որուն թէ՛ չէ նրեթա-
կան՝ գէթ բարոյապէս կրկնակի նպատակայարմար օգ-
տակարութիւնը չ'ըմբռնելու համար, պէտք է կա՛մ
չարասիրտ ըլլալ, եւ կամ յետա՛միտ ու յետա՛գիմասէր
Անհատական թէ՛ ընկերական ամէն գործելու եղանակ,
անէն միջոց, ըլլայ իսկ արտակարգ, լաւ է եւ ը՛ր. գու-
նելի. կը բաւէ միայն որ օրինակարութեան ճանքէն չի
չեղինք : Այն անձը, այն ո՛ր եւ է հաստատութիւնը՝ որ
յանդգնութիւնն ու ձեռնբեցցութիւնն զուրկ է, այնպիսին
ուչ կամ կանուխ՝ մեռնելու եւ կամ միշտ դանդաղ քա-
լելու դատապարտուած է :

Ամբիկա, այդ գերազանցօրէն նորասէր երկիրը,
օրինակ թող ըլլայ մեզ :

հանելու համար իրեն օգնական ինդրեց Այվազովսկին,
որ արդէն Դաննէրի քաջածանօթ էր իր ետանդուն աշ-
խատակցութեամբը, ինք կ'ընէր անոր անհրաժեշտ ու-
սուճասիրութիւնները եւ ինք կը կատարէր զժուարա-
գոյն աշխատանքները : Այվազովսկին զբաղուած էր
Դաննէրի գործերով ա՛յն աստիճան որ ինք ժամանակ
չէր ունենար իրեն համար աշխատելու . մինչդեռ Դան-
նէր, զայդ լուր գիտնալով հանդերձ, խեղճ օգնականին
ազատ ժամերն ալ շահագործել կ'ուզէր, որովհետեւ
ցուցահանդէսի օրը շատ հեռու չ'էր ու ինչ դեռ բան
մը չ'էր նկարած : Ասի տանելի բնա մը չէր, պարզապէս
ծայրահեղութիւն մէջ, որ ի գործ կը դրուէր թարմ,
երիտասարդ ուժի մը վրայ. ու Այվազովսկին ընդզգեց-
իր ուսուցչներուն մէկուն խորհրդովը սուտ հիւանդ
ձեւացաւ, ու ալ չ'էր երթար Դաննէրի քով. այսպէս,
քիչ ատենի մէջ, յաջողեցաւ նկարել Ռուսմասիթուրիւն
ծովային օղի պատկերը որուն համար ձեւարանի խոր-
հորդէն պարզու. ստացաւ արժանիայ առաջին շքա-
զրամը : Դաննէր իմացաւ եղելութիւնը, շուտով գնաց
գանգատելու կայսեր մօտ որակելով Այվազովսկին ըմ-
բոստ, անհնազանդ, անուղղայ, եւ ին նիկոյա Բաւովիչ
անմիջապէս հրամայեց իր թիկնապահին երթալ ցուցա-
հանէ՛սէն հետացնել այն ստահակ աշակերտին նկարը
Բայց, բարեբաղդաբար, վրայ հասաւ Բոսֆէսէօր Ա. Ի.
Ջառէրվադը ու ազատեց երիտասարդ նկարիչը՝ կայսե-
րական բարեութեանն :

Օր մը, երբ կայսրը կ'ըսէր թէ՛ Դաննէր լաւ կը
նկարէ, Ա. Ի. Ջառէրվադը համարձակեցաւ դիտել
տալութէ՛՛ ձեւարանին մէջ ուրիշ բանակարիչ (paysagiste)
մը կար Դաննէրէ աւելի տաղանդաւոր :

— Ո՞վ է, հարցուց կայսրը :
— Այվազովսկին, Վեհափառ Տէ՛ր :

— Ես անոր մասին լսել անգամ չեմ ուզեր, դա
ստահակ, յոռի աշակերտ է :

— Վեհափառ Տէ՛ր, բոսֆէսէօր Դաննէրէն արդէն
լսած էք, հիմայ թող տուէք ինձ որ իսկը պատմամ :

Ու պատուական բոսֆէսէօրը, զոր կայսրը կը սի-
բէր իրեն գերազնիւ եւ ուղղա՛միտ մէկը, պատմեց ա-
մենն ու վեր հանեց խեղճ Այվազովսկիի գրութիւնը,
որով զրկուած էր աշխատելու ամեն կարելիութիւնէ :

Այս վկայութիւնը բաւական եղաւ վերահաստա-
տելու կայսեր առաջին համակրանքին առ Այվազովսկի.
հրամայեց որ իրեն բերեն ցոյց տան անոր նկարը, շատ
հաւանեցաւ, ու անմիջապէս 1000 ռուբլի նուիրեց երի-
տասարդ նկարչին :

Առաջին քայլերուն մէ՛, Դաննէրի աշակերտն ու
հետեւողն եղաւ Այվազովսկի. բայց յետոյ, քիչ քիչ
թօթուց վարպետներուն ազդեցութիւնն ու, իրեն հա-
մար, նկարչութեան մէջ ինքնուրոյն ուղղութիւն մ'ըս-
տեղծեց ու ստացաւ եւրոպական հռչակ :

Երբոր Այվազովսկի աւարտեց իր ընթացքը, 1840ին
կայսրութեան ծախքով զրկուեցաւ Իտալիոյ ու Եւրո-
պիոյ գանազան կողմերը, ուսուճասիրելու համար բնու-
թեան ու գեղարու ետտի բոլոր հրաշալիքներն ու կատա-
րելագործելու համար արուեստը :

Սուլթան Ապտիւլ-Աղիզի եւրոպայէն բերել տուած
անուանի ճարտարագիտ մը Այվազովսկիի Իտալիոյ մէջ
անցուցած կարճ կեան, ին հետեւեալ մանրամասնութիւնը
պատմած է :
Այվազովսկի Իտալիոյ մէջ կը յաջողի մտնել մե-
ծանուն նկարչի մ'արուեստանոցը, իրեն պարզ արեւել-
ցի մը որ կը փափագի աշխերտ ընդունուիլ հոն : Իր
մագնիսող զիմագիծն իսկոյն աչքի կը զարնէ եւ կ'ըն-
գունուի հոն : Բանի մ'օրուան մէջ վարպետը կ'ակաթ

ըմբռնել թէ՛ այդ արեւելցի աշխերտը՝ հոտարակ մահ-
կանացու մը չէր. աչքերուն մէջ ուրիշ բաներ կը կար-
գայ : Օր մը, կուժ մը կուտայ իր նորիկ աշխերտին
ձեռքը, պատուիրելով որ մօտակայ աղբիւրէն երթայ
ջուր բերելու. կ'երթայ Այվազովսկի, եւ փոխանակ
աղբիւրին, կը տեսնէ հրաշալի աւազան մը մարմարէ,
ուր կը թափի արծաթախալ ջուրը, ալիքներ գործելով
ջուրը. պահ մը կ'ըզայ լսել աղբիւրին կարկաղը, կը
մօտենայ, կուժը կը մօտեցնէ եւ կ'ապչի կը մնայ, երբ
ինքզինք կը դտնէ արուեստական աղբիւրի մը նկարին
առջեւ. կը հասկնայ խաղը, ինքնամիտիւում մը կուտե-
նայ շուտով, ու, առանց վարանելու, կ'ակոխ նկարի
շուն մը, աւազանին ելլըր սատակած, գանկը փշրուած,
մարմինն ամեն մասերուն մէջ որդերը կ'ուտան կը գե-
ռան . կ'աւարտէ նկարն ու գատարկ կուժը ձեռքը, կը
վերադառնայ վարպետին քով. սա տեսնելով գատարկ
կուժը, կը հարցնէ իր աշխերտին ուշանալուն պատճառը
«Տէ՛ր, կը յարէ Այվազովսկի, դժբաղդութիւնն մը.
աղբիւրին ջուրը ապականած է. աւազանին քով
շուն մ'իմկած է, դիակին մէջ որդեր կը վիտան : Կը
փութայ վարպետը դէպ ի համբաւար որ աղբիւրը, կը
տեսնէ, կը հասկնայ իրողութիւնը. կը մօտենայ աշխե-
տին ու կ'ըսէ ականջն ի վար. «Սիրելի՛, քեզի հաւա-
սարող վարպետ չեմ կրնար գտնել հոս, դարձի՛ր եր-
կիրք » :

Այդ թուականին կ'ակոխ Այվազովսկիի փառքը. ուր
որ կ'երթայ համբաւն իրեն կը հետեւի. արուեստասէր
ու արուեստակից, հիացումով ու յարգանքով կը շրջա-
պատեն վինք : Վենետիկի գրատանը մէջ կը ցուցադրէ
քանի մը պատկերներ, զորս տեսնելու փափագով դուռն-
դագնուց հոն խոնող ամբարիւն առջեւ տէրութիւնը կը
պարտաւորի քաշիկ զօրքերու պատուար մը. այնչափ մեծ
էր այցելուներուն թիւը :

ՕՐՈՒՄՆ ԼՈՒՐԵՐ

Նոյն Խաղաղական Բարձրագույն Կոմիտեի 2ին շարժի իրիկուն Մանրուքա զրոսանաւովը մեկնեցաւ Եւրոպա: Մեկնումի պահուն, 21 թընդանով արձակուեցաւ Սալէն նաւակայքէն:

— Ֆէրալ չուքնաւով, ամսոյս 2ին ճիտաէյն և Եւրոպայի վերադարձան 1248 եգիպտացի ուխտաւորներ, ամենքն ալ քաջաւողջ:

— ՆՈՐ ՄԱՀՏԻ ՄԸ. — Կառավարութիւնը Ուստի Հայֆա արարեց Տէրփիշ մը, որ մարդաբէական շնորհ ընդունած ըլլալ կը կարծէ և արգէն իր շուրջը համախմբած է յիսնեակ մ'աշակերտ:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Վիէննա 28 Մայիս. — Վիէննայի դիւանագիտական շրջանակներուն մէջ կարեորութիւն կը տրուի այն քննական ուղեորութիւններուն, զորս Կ. Պոլսոյ գերմանական, անգլիական ու աստրիական զինուորական կցորդները կ'ընեն այս պահուս Մակ գոնիա և Ալբանիա, ինչպէս նաև Հայաստան, Գերմանիոյ նախաձեռնութեամբ, թուրքիոյ օգնելու նպատակով որպէսզի սա' այդ նահանգներուն մէջ բարենորոգումներ գործադրէ և այդ կերպով Արևելքի մէջ խաղաղութիւնն ապահովէ:

Աւստրո-Հունգարիոյ զինուորական կցորդն է որ Հայաստանի ուղեորութիւնն ստանձնած է, չ'զրգուելու համար Ռուսիոյ կասկածները, աւստրո-Հունգարական սպայի մը ներկայութեամբն ի Մակ գոնիա կամ Ալբանիա, և նաև անգլիական սպայի մը ներկայութեամբն ի Հայաստան: Գերմանական զինուորական կցորդը, հազարապետ Մորիզն, իր անգլիացի պաշտօնակցին հետ, Մակ գոնիոյ և Ալբանիոյ ուղեորութիւնը կը կատարէ:

Մեծ յոյս կայ հոս թէ՛ զինուորական կցորդներու այս ճամբորդութիւնը պիտի ստիպէ թուրքիան՝ եւրոպական ու ասիական այս նահանգներուն մէջ բարենորոգումներ մտցնելու այնքան կարևոր գործին:

ԻՐԼԱՆՏԱՅԻՔ. — Նիւ-Եորքի իրլանտական ընկերութեանց Միութիւնը գումարուով մը մէջ պարտաւանքի բանաձև մը քուէարկեց Մեծին Իրլանտիոյ դէմ, նաև յայտարարեց թէ՛ Իրլանտացիք պիտի կուսին Իրլանտայի աշատութեան համար, երբ Անգլիա նորէն բռնուի իր գոյութեան սպառնալից պատերազմի մը:

մը վրայ կ'զգաս ինքզինքդ» գրած է ժամանակին Ֆրանսայի ծանօթ նկարիչ մը, շուրջ մուկ ու կրակ ու կարծես թէ՛ գոհարարոր հրետանիներու շտաբուն պայթումներէն ու խորտակուած, ջարդ ու փշուր նուերու ճարձատուներէն ականջներդ պիտի խլանան:

Սեպտեմբերի պատերազմէն ետք, երբ հաշտութիւնը կը բերեցաւ, Յովհաննէս իր ընտանեօք Փարիզ գնաց, ուր ուսական մեծ գետնան Քիտիլի կոմսը զինք ներկայացուց իբրև Ռուսիոյ պարծանք, Նաբոլէոնի եւ Էօֆէնի կայսրուհոյն: Կայսրը, սիրալիր ընդունելութեան մէջ ըսաւ. «Ասք եմ եւրոպական դարձած անուններդ ու կը փախազիմ ձեր նկարները տեսնել: Կը յուսամ թէ՛ պիտի գնէք մէկ քանի հատ մեր Յուցանանդէսը, հանձնարիչ հիացողներուն փափայկը լրացնելու համար»: Ա' այնուհետեւ տեսնել պէտք էր ամբողջ, որ կը վազէր այցելելու Այվազովսկիի նկարները: Ով որ տեսնէր իբրամէ աւելի ընտիր եւ հրաշալի նկարները, զորս այնքան քիչ տեսնի մէջ պատրաստած էր, շատ մը տարիներու մէջ պատրաստուած թանգարան մը (Musée) պիտի կարծէր անոր արուեստատունը:

Հայ, օտար, կը զիմէին աշխատակալ, սքանչանալու համար Այվազովսկիի քաջարուեստ վրձինն արտագրութեանց վրայ, ու ծնկագուձ երկրպագելու ստեղծագործ հայ հանձնարին:

Մարմալախա Փէլիսիէ քանի՛ կարօտը քաշէր իրիմու հրաշալից տեսարաններուն, անմիջապէս իր երկձի կառքը կ'ուղղէր Այվազովսկիի արուեստարանը, ուր տեսնելով իր այդ սիրած բոլոր տեսարաններուն նկարները մէկ կամ երկու կտորուն կտաւներու վրայ, սենեկի մը մէջ կարգաւ դրուած, կարօտը կ'անէր ու երախտագէտ սքոթով կը գովէր արուեստագէտը:

Որան Վէրնէ, մէկ հատիկ մարտանկարիչը որով

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԲԻՔԻՆ 4 ՅՈՒՆԻՍ. — 349 եւրոպացի սպաներ ու զորքեր յայտարար Ժաման, ուր օտար ազգութեանց պանպանութիւնը իր կազմակերպեցն:

Այս քննարու առաքուած առաջ եկած է յարձակումներէն, զորս մոլեռանդ Պօքըրները ուղղած են Բաօ—Դինկ—Յու ի մէջ օտարաց գէմ որոնցմէ չորսն ըսպանուած ու շատերը վիրաւորուած են:

ԲԻՔԻՆ-ՕՐԻԱ 2 ՅՈՒՆԻՍ. — Բրիտանական գունդերը Բրէզորիան տոկն:

ՀԱՆՐԱՅԻՆ ՎԵՐՔԵՐ

Ինչ է հանրային կեանքը. — Մի օրէ ձեռնարկ կամ սկսուած գործի շարունակութիւն, որ ժամանակի պահանջը կը զառնայ, ուսկից հանրութիւնը կ'սպասէ օգտուելու, զարգանայ ու վերականգնուի, կը կոչուի հանրային խնդիր, որու անկեղծօրէն նուերուողն՝ թողով անձնական դժուձ շահերը, վայելք ու հանգստ, իւր վիճակին անդիտակեց ու կենսական պահանջներու առաջ ընկրկող հասարակութեան տեղ ինք կ'աշխատի իւր ուժին թափովը, կը կոչուի հանրային գործիչ, իսկ նորա ընդգրկած ասպարէզը՝ հանրային կեանք, կեանք մը՝ որ, ճակատագրային հեղուկութիւն, որքան վսեմ՝ նոյնքան աննախանձելի լինելու գրոշմ կը կրէ. . . Մասնականը Հայոցս մէջ:

Ահա՛ նոր հարց մը. թէ ինչո՞ւ այդ սպարէզին անկեղծօրէն նուերուողն՝ զրեթէ առանց բացառութեան՝ իւր կենդանութեանն հասարակութենէն կը խճրճուի ու երբեմն ալ բարոյապէս մահուան կը դատապարտուի, մինչդեռ յետ մահու, յաճախ կը սրբանայ, կ'ատուածանայ. . .

Աւագ մարդն ինչ որ ալ գործէ, Մահուանէ վերջը լոյկ մեծ է. (Արժեւն որ Թօմարիցեան):

Շատ պարզ է պատասխանը. Մեք Հայերս մեծամասնութեամբ, կը նմանիմք այն թուզուին, որ հարաւային Աֆրիկէի մէջ միայն կը գտնուի Յըլաֆինկօ անուամբ. սա իւր կտուցը ջրին մէջ միտած՝ ժամերով, օրերով կ'սպասէ՝ որպէսզի ընկերներէն անջատուած մտորեալ ձկնիկ մը պատահմամբ եւ կամ ջրոյն տեղատուութենէն մղուելով՝ բերանն ընկնի, եւ ինք կուլ տայ:

Միեւնոյնն է նաև հասարակութիւնը հանրային խնդրոց վերաբերմամբ, սա տարբերութեամբ որ՝ Յըլաֆինկօն՝ յարափոփոխ բնութեան ընծայած միջոցներէն կ'սպասէ իւր նպատակին կամ պահանջին գոհացումը. մինչ հասարակութիւնն, ափ մը անձուռէրներէ:

Կրնայ պարծենալ Ֆրանսա, որ մը, Այվազովսկիի մէկ նկարին առջեւ, զմայլած յախշտակուած, կը դռնէ. «Կիւտն իր բոլոր կեանքին մէջ երազած անգամ չէ այսպիսի բաներ»: Ու սակայն, պէտք է ըսել, Կիւտնէ Ֆրանսայի ծովային առաջին նկարիչն էր, եւ ինքն է որ 1855 ին տիեզերական ցուցանանքէն ստացաւ Ա. կարգի պատուանշանը:

1874 ին, Ֆրիէնցայի գեղարուեստից ճեմարանն առաջարկեց անոր որ իր սեպական պատկերը նկարէ, Բիզգիի նկարարանին մէջ տեղաւորուելու համար. 1887, Սեպտ. 26ին Այվազովսկիին իր նկարչական գործունէութեան յիսնամակը ամօնեց, որու առթով ստացաւ Արեքսանդր Կուսկիի շքանշանը: Թէոդօրիա քաղաքն իր արժանաւոր զաւակն ընտրած էր պատուաւոր քաղաքացի: 1892ին Շիքալոյի դուցանանքէսը գրած նրկարները չ'ին ու նոր աշխարհներուն այցելուները թովեցին:

Անթի. նկարներ ունի, յիշելու միայն ամենագլխաւորները.

- Սեպտեմբերի տեսքը
- Նէպոլէոնի գիշեր.
- Փոթորիկ.
- Քառո.
- Սոցորութիւն Միջերկրականի վրայ.
- Գարբի կղզին.
- Սե. ծովու տեսարաններ.
- Ս. Գէորգի վանքը.
- Ռուսական չորս հարստութիւնները.
- Ոչխարի հօտը, փոթորկի ժամանակ.
- Համաշխարհային Ձրհնդեղ.
- Աշխարհի ստեղծագործութիւնը.
- Կովկասեան լեռնաշղթայ. Էւն. Էւն.

Աւելորդ կը համարինք երկարօրէն ծանրանալ այս կէտին վրայ, ու կը շատանանք անհունապէս խնդակցելով այն սիրալիր ընդունելութեան որով ողջ նուեցաւ «Նոր Օր» ի ուրախաբան իրեւ ումը՝ ջերմ հոգում մ'ը՛ ել մեր բոլոր օտարաբնակ ազգառէր եղբայրներուն որ նիւթապէս թէ բարոյապէս աջակցելու աշտուութիւնն ունենան այսպիսի ազգասիրական ձեռնարկի մը, որուն հանրային օգտակարութիւնն անժխտելի է:

Ս. Օ.

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Լ. Ո. Ի. Բ. Ե. Ր.

ՊԱՏՐԻԱՐՔ ՕՐՄԱՆԵԱՆ

Մայիս 29 թուականով կը գրեն Կ. Պօլսէն. Հայոց Պատրիարքը Մայիս 24ին Երւրազ կանչուեցաւ իրեն տեղեկութիւն տրուելու համար թէ՛ Սուլթանը նոր Իրասէ մը հանած է, որով կը հրամայէ Հայոց վրայ դարձուած ծայրահեղութիւններուն վերջ մը դնել. բոլոր թուրքիոյ Հայոց վրայ՝ Պատրիարքարանին ունեցած իրաւունքները յարգել, սրոնց մէջ են նաև Սիսի Կաթողիկոսին ընտրութեանը վերաբերեալ իրաւատուութիւնները. չ'պահանջել զինուորական ստորք այն Հայերէն, որոնք վերջին դէպքերէն քանդուած են:

Ս. Պատրիարքին կը ծանուցուին մանապէս թէ՛ ուրիշ կայսերական իրատէ մ'ալ կը հրամայէր իրեն եւ աւանել հրաժարականն ու նորէն իր պաշտօնին գրական անցնիլ:

Այս բանակցութիւններէ վերջ, Պատրիարքը հրաւիրեց Ազգ. ժողովը, իմացընելու համար Սուլթանին հրամանները, որ կը փափաքի վերջ մը դնել Պատրիարքին հրաժարման պատճառաւ 2 ամսէ ի վեր սիրող տագնապին:

Կ. Պոլսոյ հայ թերթերուն մէջ կը կարդանք որ Ազգ. Պատրիարքարանը վաւերացուցած է Գեր. Յովսէփ Եպիս. Այվազեանի ընտրութիւնը յառաջնորդութիւն Եգիպտոսի վիճակին:

Մաղթենք որ Ս. Առաջնորդին գալուստովը շուտով զահայուցիչ լուծում մը գտնեն շատ մ'աւակախ խնդիրներ, որք այսօր Ազգ. Վարչութեան ուսին վրայ կը ծանրանան, և որոնց կարողագրութեան համար անհրաժեշտ է բանիմաց Առաջնորդի մը ներկայութիւնը:

Մինչև ցայսօր Վենետիկի ազնուականներուն պաւանները կը զարդարեն այն նկարները, ո'վ գիտէ որքան բարձր գիներով ձեռք ձգուած է Հոմոսի քանի՛ քանի՛ պալատները գեռ կը պահեն հայ նկարչին աւանդները: Փարիզ տուաւ իրեն սոկի շքանշան, ի վարձատրութեան իւր հանդիսադրած նկարներուն Երբ որ վերադարձաւ ի Ռուսիա, Նիքոլա կայսրը տեսնելով որ Եւրոպիոյ բոլոր տէրութիւններէն պատուուած ու փառաւորուած է իր հանրահռչակ հպատակը, Ս. Աննայի ասպետութեան Գ. կարգի աստիճանը կը շնորհէ անոր, յետոյ, մասնաւոր հրովարտակով մը, կը կարգէ Ռուսիոյ մարտանաւերու նկարիչ ու Բէթրապուրիի գեղարուեստից ճեմարանին Անդամ:

Յովհաննէս, 1845 Ապրիլ 13ին Կոստանդին Մեծ-Գոթին հետ կ'ուղեկցի ի Կ. Պոլիս ուր մեր ազգային ներէն կ'ընդունուի արժանավայել պատիւներով: Վերադարձին, իր սիրական հայրենիքին, Սիսիու ալեւայլ քաղաքներուն ու նաւահանգիստներուն տեսարանները նկարելով զբաղեցաւ:

1847ին, Ամստերդամի գեղարուեստից արքունական ճեմարանին անդամ, ու միեւնոյն ժամանակ Ս. Բէթրապուրիի նկարչութեան ճեմարանին վարժապետ կարգուեցաւ. 1851ին Ս. Աննայի Բ. կարգի Առաքեալ, ու 1853ին Ս. Բէթրապուրիի այլաբանագրական ընկերութեան Անդամ: Նոյն թուականին, մասնաւոր արտօնութեամբ մը, որդիէ որդի ազնուակամի տիրոջը կրկու իրաւունքը շնորհուեցաւ իրեն:

Արեւելեան Ռուսեթուրք պատերազմը գեղեցիկ նիւթ մատակարարեց Այվազովսկիի ուսումնասիրութեանց:

Սինոպի անոնի նաւամարտի նկարը տեսնողները բաւ մը չեն կրնար գտնել գովելու, սիրական տեսարանի

ԱՌ ԼՈՐՍԻՆ

գտնէ Յիւստինիոս գիտէ համբերել ու երբէք չ'դատաւար- տեր մակընթացութիւնը կամ տեղափոխութիւնը՝ երբ պահ մը առաջ ջրոյն մէջ միտած կտուցը ժամերով աւու- զին կազուցած կ'սպասէ մինչեւ որ ջրերն զան վերս- տին թրջել զայն. մինչդեռ մենք, թէևս նոյն անշարժու- թեան մէջ, մինչևոյն ժամանակ կը խոտեմք կ'անար- գենք այն ժիր ու գործունէայ անհատները, որք կ'աշխա- տին ջրոյն հոսանքը վերստին մեզ դարձնելու :

Այսօր, խիստ կտրուկ որ ձեռնարկ մը որուն բազմա- տեսակ օգուտները բացայայտ կ'երեւին, ամենուս ալ խանդն ու եռանդն իսկոյն կը մագնիսէ. տակաւին գոր- ծի չ'ձեռնարկած՝ վայելելու եղանակներուն վրայ կը խորհինք, կը վիճենք, կը զգտնենք, զի ամենընիմալ ի- րարմէ կ'սպասենք բոժոժը վիզն անզրնելու. վա՛յ այն անձին, որ վարանոտ հասարակութեան փոխանորդը կը հանդիսանայ քուէով կամ իքնարեւարար. ամենքը մէկ մէկ հրամանատար ու համարառու կը ձեռնարկուին, մին գործունէութեան եղանակը ձեռք կ'առնէ կը ծեծէ, միւսը գործոյն յապաղելը կը դատաւարտէ, ուրիշը գոր- ծողին անկարողութիւնն ու խակութիւնը կը վճռէ, վեր- ջապէս այդ ամեն դիտողութիւններն ի մի ամփոփուած՝ ընդհանուր վճռի մը ձեռք կ'առնուն եւ յաճարի. հասա- ըսկութիւնն այնքան յառաջ (կամ աւելի ճիշտ յետո) կը նետուի որ այդ մէկ կամ մի քանի անձանց համար կու- նարգուի նաեւ ձեռնարկն ու կը լքուի հասարակութե- նէն. ստիպուած իրականութիւն, որու օրինակներն, անցեա- լին թէ ներկայիս մէջ զօրախտարար մէկէ աւելի են :

Ան այս պարագան է որ կը կաշկանդէ, կը ջլատէ հանրային գոծունէութիւնը. զրպարտուելու, գատապար- տուելու արհաւիրքն է որ կ'ընկրէ մեր զողջոյնն քայ- լերն այդ փշուտ առաւելի վրայ դնել, միթէ պետք չէ՞ ալլուս սթափել, ինչո՞ւ չ'օգտուիմք անցեալի գործնա- կան տխուր դասերէն. ինչո՞ւ տակաւին մեր մտաւորա- կան զարգացման, արդար իրականացը պաշտպանման եւ վերջապէս մեր ժամանակակից պահանջներուն գիտակցու- թիւնը չունենանք. եւ ամենէ գատապարտելին, չեղճ՝ ունէ՞ հանրային գործունէութեան մէջ, ըլլայ անձնա- կան, նիւթապէս թէ բարոյապէս, քայուիմք կծկուիմք, երբ մի ունէ ձեռնարկ տեսականէն գործնականի շաւղը կը մտնէ :

Բննադատութիւն մը, երբ հետի լինի անձնական դժու. ձ նկատուողներէ, հաստատուած՝ հիմնական փաստերու վրայ, դատողութեան գործը կրէ, մեծապէս իւր օգտակարու- թիւնը կ'ունենայ ունէ՞ հանրային խնդրոյ վերաբեր- մամբ. երանի՞ թէ մինչև ցայս վայր ամեն ձեռնարկներու խղճմտորէն աջակցող քննադատներու բազմութիւն մ'ու- նենայինք, որք օժտուած լինէին առողջ դատողութեամբ, անաչառութեամբ ու հեռատեսութեամբ. թերեւս անցեալի մէջ թուժք մը կանգնէին եղած բազմութիւն սխալմանց զէմ. միտքերը զարգացնէին ու գիտակցութիւնը, դա- տողութիւնը աւելի շուտ ներմուծուէր մեր մէջ. սա- կայն, աւազ, քննադատներու սովէն՝ զբաղուելով մի- ջեւ ցարդ անհատական խնդիրներով, միշտ անտարբեր գտնուած եմք հանրային կեանքի վեհ ասպարէզին մէջ. օղորմաւորութիւն՝ ու միշտ ուղղամտութիւն :

Ե. ԳԱՐՍԻԱՆ

Չքննող սղջիկ չըմտելի երեւոյնքու մէջ մինակ, Աշխարհներու գիշերուան այցելու՛նի լուսասիրեւ. Արեւելքէն արեւմուտք խորտաչ գլխիկը ու սիգ հով, Դէպի հիւսիս՝ հարաւէն ի՞նչ կը նայիս յուս ու մուս. Բեզի այն կողմ, երկնքի բարձունքներէն այդ արեւօք Ամպի կոյտե՛ր կ'երեւին փոթորիկի ազդարար, Ու դուն՝ այդպէս սքլածագոյն, զողջը այժմէն զալկահար, Մերձու՛նն անոնց կը զիտես անպատասպար ու սնոք. Թէ ոչ խաղաղ, պարզ, յստակ, զով, աստղայոյց այս պա- հուն

Հող ժամադիր՝ եւ մէկու մ'անձայն, թափուր ճանքան գետ,

Կամ թէ լքուած ալ անկէ ու առեղծուած, թափառուն,

Կեանքդ այդ ատած, նկատած տաղտուկներու խոտան

բեր,

Անկարող իսկ հանելու այն ժպիւրէնն որ ու վրէժ,

Շանթահարի՛ր կ'ուզես արդ, անէանա՛ւ զանալէ՛ս :

Խօսէ՛, ո՛հ, լուս մի՛ կենար ու զուր տեղ քեզ մի՛ տանջեր. Ի՞նչ ցաւերուդ, հոգերուդ եթէ լինի՛ խելահաս, Լարած անոր համեմատ քնարս կ'երգես այս գիշեր, Քեզ յոյսերով իրական օրօրելով աներազ. Դուն՝ հուսի ապա զուարթացած, երջանի՛ կը երջանկին, Երկրէ՛ երկիր պտոյտներդ շարունակել կ'սկզբես. Դադրած տխուր ու երկչոտ նայելէ միշտ զէպ՛ հիւսիս, Յու երժանարա, ջուրերու մէջ կը լողաս հրճուողին. Ծովէ՛, լճէ՛ կ'ըլլես դուրս ցիր շող-վարսերդ ամփոփած, Կը յօրինես հիւսիսէնդ անտառներու խորն այլուր, Ալեակներէն յետոյ քեզ հիւրընկալող գրկաբաց, Տերեւները կ'ունկնդրես շշուճներովն հեշտալուր. Ծաղիկներէ՛ խնկարկուած, խոնջ կը մտնես ննջարան, Կը կապուիս ու նորէն կուզաս ուրախ երեւան :

Ո՛հ, Էնացար դուն առանց ո՛ր եւ է բառ մ'ըսելու. Թախտութիւնդ այդ անպատու ինչի՞ կրնամ վերագրել, Վճիտ աստղեր ահա քեզ՝ նաժիշտներու պէս հլու, Շրջապատած են ու դուն ճանքադ կ'երթաս անտարգել. Ոչ արեւելք, ոչ հիւսիս, ոչ արեւմուտք, ոչ հարաւ. Զ'ունի ազատ երեւոյթ մ'սպասանալու փոթորիկ. Զ'իայ ամպի բիծ մ'անգամ ու այդոյն ծագնէ մօտիկ, Սիւզէն շոյուած զաշտերուն վրայ կանաչ, հոգեգրաւ. Հաւատալի չէ նաեւ որ, քեզի պէս նազնի իշխանուէի մ'օգտանալ այնքան փափուկ ու սիրուն, Զ'պաշտուի ընտրածէն ու վայելքէ զուրկ լինի, Մահուան տենչայ՝ վերջ տալու իր լքանքի ցաւերուն. Ի՞նչ տրտմութեանդ շարժառիթն. աղջի՛կ չքնաղ, տարա- բնակ, Հէզ Հայաստանն է արդեօք հուրի, սուրի միշտ ճարակ :

«Նովոյէ Վրէմիա» մէջ Վ. Ս. Կ. այսպէս կը գրէ հանդուցեալի մասին.

«Կարելի է համարձակ ըսել որ, եթէ Սյվազովսկին չըլլար, Թէոդոսիոյ մէջ հիմա ո՛չ կիմնադիրն կ'ըլլար, ո՛չ նախահանգստի չէնքեր, ո՛չ երկաթուղի, ո՛չ ջրանցք, ո՛չ թանգարան, ո՛չ արձան, այլ հիմնական կենդանի քաղաքին տեղ՝ ձէնտովական հին աշտարակին մօտ ապատանած քնացող աւան մը կ'ըլլար :

«Տար Աստուած որ ամեն մէկ քաղաք ունենայ իր Այվազովսկիի դէժ կէտը »
Համոզումներով, լեզուով, հաւատարիմ հպատա- կութեամբ Այվազովսկին իսկական ոռու մ'էր եւ կը սիրէր Ռուսիան, բայց դա արդեւք մը չէր որ ան՝ ան- կեղծ, ո՛չ թէ պղտոտնական սէր մը տածէր դէպ ի ցեղակիցները, հայերը :

Ամօթ է հրօժարել սեպական ազգութենէ՝ —կ'ը- սէր ան— մանաւանդ այսքան փոքրիկ ու մինչև ցարդ թուրքերէն հալածուած ազգութենէ՛ մը :

Հայկական գործերու մասին կը խօսէր մերթ տաք- ցած եւ համոզուած էր թէ՛ անիրաւ էր նկատել իր ցեղակիցներն իրեն մարդիկներ, որ կը ձգտին անջա- տուել Ռուսիայէն Այս բանի մէջ, անոր կարծիքով, սարսափելի թիւրիմացութիւն մը կայ :

Վերջին ժամանակներս Այվազովսկիի համար ծանր մտահոգութեանց աղբիւր էին այն վայրագութիւնները, զորս թուրքերը գործեցին ու անպատիժ կը դործին զօրադէ հայերու վրայ փոքր Ասիոյ եւ Կ. Պոլսոյ կու- տորածները, բռնութիւնները, թալանները զինք սար- սափահար կընէին, կը ցնցէին, ան չէր կրնար ըմբռնել թէ՛ Եւրոպան ի՛նչպէս կարող է անտարբեր աչքով նայիլ այս տղաղութեան վրայ. Բայց չէ՛ր գաղբեր յու- սալէ որ մարդկանց սիրտը կը շարժի եւ վերջապէս կը միջնորդեն հայկական գործերու :

Եթէ ազգէ կը տեսնես վայրն այն լացի ու սուգի, Թատերաբեմն արեւնոտ արարներու զօրսային. Ու եթէ հոն յուսած ճիշն ու կոծն՝ անդու շեշտակի Սուր Դարի մը հանգոյն կուզան շանջիդ կը խրին. Մի՛ վարձիր ձեռնիքով, շարժի՛ր արգար զայրոյթով. Նեւե՛է՛ շանթեր, կայծակներ անօրինող դատաստան, Փռած գեպին բոնուորը զիպապատա, անկենդան, Հայուն վայել տո՛ւր ազատ իր իրաւունքն անկողով. Բա՛ւ. բա՛ւ այսքան խողխողում. բա՛ւ արգանդի ցելում. ներ . . .

Եթէ քեզ ալ հալածել շահամոլներն յանդգնին. Դուն անխնայիս այն ատեն ո՛չ որք մի՛ խրնայիր, Այս հողագունան անթեալ րանդէ՛, փշրէ՛ հիմնովին, Բայց չ'ես խօսիր, ա՛հ, ա՛հ՝ գլխիկոր մար կը մտնես, Մտի՛ր, դուն ալ շատ անգուժ ու չար աղջիկ մ'եղիր ես :

ԿԱՐԵՒՈՐ ԱՉԳ

Հայասէր Մ. Ժիւլ Միւնիյէ, նախկին ուսու- ցիչ Կեդրոնական կրթարանին եւ արտօնատէր « Փիւնիկ » կիսամենայ հանդիսին, այս անգամ փարիզէ վերադարձած ըլլալով՝ հաճած է, Լսա- րան. Ընթերցատուն Ընկերութեան Գործ. Ժողո- վոյ դիմումին պատասխանել, ընդունելով «Նոր Օր» ի արտօնատիրութիւնը. Հետեւաբար այսու- հետեւ թերթին ճակատը պիտի նշանակուի յի- չեալ ազնիւ հայասէր փրանսացիին անունը իբրև Արտօնատէր Նոր Օրի :

ՆՈՒԻՐԱՏՈՒԻ ԼՍՍՐԱՆ-ԸՆԹԵՐՅԱՏԱՆ

Մեծ. Տխարք
Կ. Չուլազեան.— 1 օրինակ Թորոս Լիւնի Ծերերնցի
1 " Երկունք թ. դարու
Ծերերնցի.
1 " Ընդհ. Պատմ. Վահան
Գիւրքեմանի :

Ս. Օտապաշեան. — 1 տարեկան ֆրանսերէն շա- րաթաթերթ մը Annales politiques et litteraires.

Մ. Ժ. Միւնիյէ. — 1 տարեկան ֆրանսերէն Al Moayad շարաթա- թերթը.

Ընթերցատէր հայ մը. — 1 տարեկան « Բիւզան- դիոն » :

Ռուս եւ թրքական վերջին պատերազմին, Այվա- զովսկին շարք մը միջազգայն նկարեց. նաեւ նկարած է քանազան միջազգայն Գոլոմպոսի կեանքէն. Թրքա- կան վերջին վայրագութիւններն ալ առատ նիւթ մա- ակալարեցին անոր՝ իրաւագործ վրձինին :

Թէև իր եղբայրներուն երեցագոյնն էր Յովհաննէս բայց ամենէն աւելի երկարակեացն եղաւ. ծերութիւնը զգալի նեղգործութիւն մը չունեցաւ անոր հանձարին վրայ. դեռ մինչև վերջերս կը նկարէր ու կը նկարէր, եւ իր նկարներու ցուցահանդէսը կը կազմէր :

Կը յիշենք որ Գարբիէյ Արքեպիսկոպոս Այվազովս- կին թիֆլիզ վախճանեցաւ 1880 ին, իսկ Կոստանդին Այվազովսկին, որ ատեն մը Թէոդոսիոյ մաքրանոցին (quarantaine) պետն եղաւ, հոն մեռաւ :

Յովհաննէս Այվազովսկի առաջին անգամ ամուս- նացած էր Անգլուհի մը հետ՝ որուն ծանօթացած էր Օտէսա, իր նկարներու առաջին ցուցահանդէսին. այդ ամուսնութիւնն միայն Չ աղջիկ ունեցաւ, մանչ չ'ու- նեցաւ. Ծերութեան օրերուն, Այվազովսկի կրկին ա- մուսնացաւ սիրուն ու երիտասարդ Հայուհի մը հետ : Իբրև ոռու ծովանկարիչ եւրոպական համբաւ վա- յելելով հանդերձ՝ չէր մոռնար իր ծագումը, եւ երբեմն ալ կ'օգնէր իր ազգակիցներուն, իրեն դիմող խեղճ հա- յերուն :

Հանգուցեալի բովանդակ կեանքը, խիստ աննշան ընմիջումներով, անգամ էր իր քննադատին մէջ. Ծոպն ու կապոյտ հորեզորը կը սիրէր ու չէր կրնար գատուիլ անոնցմէ. ապրեցաւ ու իր վերջալուսը մարեցաւ հոն, կապոյտ երկնքի եւ ծիրանի ծովուն մէջտեղը : Հան- զեաւոր կերպով թաղուեցաւ Թէոդոսիա Մայիս Ծին, ի ներկայութեան բազմաթիւ յարգողներու եւ խուռն հասարակութեան :

Հոչակաւոր նկարչի յիշատակին « Պերժ Վիդ. » լրագիրը հետեւեալ տողերը նուիրած է :

« Այվազովսկին մեռա՛ւ . . . : Չկայ այլ եւս բը- ծութեան գեղեցկութիւններուն եւ անոր բանաստեղ- ծական րոպէներուն ոգեւորուած թարգմանք. մեծ հոգի մը պակասեցաւ երկրի վրայ. Ռուսիան հարստացաւ. անոր գերեզմանով . . . : Ինչքան տարեկան դա- տանի, Այվազովսկին արգէն յոյն էր Ռուսական գե- ղարուեստին. իսկ յիսուն տարի յետոյ համաշխարհային գեղարուեստի փառքն ու զարդն էր ան, անունն սքան- չացու մնալու աղբիւրը, ինչպէս անհուն է Մայր-Բնու- թիւնը, որով ոգեւորուած էր անոր սքանելազործ, հմայիչ վրձինը. Առաջին նկարը որով իվան Կոստանի- նովիչ Այվազովսկին մտաւ նկարչական ասպարէզ, Շաիլ, կարապետ էր մի ետուն ստեղծական գործունէութեան, որ ոչ՝ մի րոպէ չը թուլցաւ զրեթէ՛ 65 տարուան ըն- թացքում եւ ոռուսական գեղարուեստը փռուսորեց բոլոր լայնութեանց ու երկայնութեանց տակ, որ գի- տնն գնահատել իսկական բանաստեղծական ոգեւորու- թեան ստեղծագործութիւնները » :

Գարե՛ր պէտք են, դարե՛ր, որպէս զի նորէն երկիրս ծնի Այվազովսկի մը. ամեն սքանչելիք այսօր կը ծրար- ուին կը թաղուին փոսի մը մէջ, որ սանձանուած է կուլ տուլու ամեն բան :

Իսկ մենք, անմահ նկարչին արեւակից պաշտող- ները, պիտի մոռնանք Այվազովսկին, ո՛չ երբէք, ընդ- հակառակն, պէտք է պաշտենք իր սնունն ու յիշա- տակը :

Անմահութիւն հանձարին :

Ս. Բ.

Տպագրութիւն Ս. ԳԱՐԻՆՆԱՆ — Պագար Մուրուր